ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 4, հեռ.՝ (+374 60) 830 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«07» 12 2022թ.
No 00 7927

**«ՎԱՅԼԴԲԵՐՐԻԶ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ԱԼԱՆ ԿՈԿՈԵՎԻՆ**
**(հասցե՝ ք. Երևան, Կենտրոն, Մ. Խորենացու 3, բն. 1,
պատճենը՝ էլ. փոստի հասցե՝ sales@wildberries.ru)**

Հարգելի՛ պարոն Կոկոև,

Կից ուղարկվում է Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի 2022 թվականի դեկտեմբերի 6-ի ««Վայլդբերրիզ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերաբերյալ թիվ ՀԳ-02532/22 վարույթը կասեցնելու մասին» թիվ 452-Ա որոշման պատճենը:

Առդիր՝ «2» թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԱՇՈՏ ՎԱՀԱՆՅԱՆ**

*Կատարող՝ Արեգ Հովհաննիսյան
Անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչություն
Հեռ. (+374 60) 830-840 (238)*

competition.am կայքում հրապարակման օրը՝ 23 հունվարի 2023 թվական:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

6 դեկտեմբեր 2022 թվականի թիվ 452-Ա

«ՎԱՅԼԴԲԵՐՐԻԶ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ ՀԳ-02532/22 ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2022 թվականի դեկտեմբերի 6-ի նիստում, քննարկելով «Վայլդբերրիզ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **Ընկերություն**) վերաբերյալ թիվ ՀԳ-02532/22 վարույթը կասեցնելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Հանձնաժողովի նախագահի 2022 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ ՄՊՀ-5416 գրությամբ (այսուհետ նաև՝ **թիվ ՄՊՀ-5416 գրություն**) Ընկերությունից պահանջվել է հինգ աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողով ներկայացնել Ընկերության կողմից 2022 թվականի հունիսի 1-ից մինչև 2022 թվականի սեպտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում իրականացված առաքումների վերաբերյալ տեղեկատվություն՝ համաձայն կից ներկայացված ձևանմուշի:

Ընկերությունը թիվ ՄՊՀ-5416 գրությունը ստացել է 2022 թվականի հոկտեմբերի 12-ին, որից հետո պարտավոր էր թիվ ՄՊՀ-5416 գրությամբ պահանջված տեղեկատվությունը Հանձնաժողով ներկայացնել մինչև 2022 թվականի հոկտեմբերի 19-ը ներառյալ: Մինչդեռ Ընկերությունը թիվ ՄՊՀ-5416 գրությամբ պահանջված տեղեկատվությունը սույն որոշման ընդունման պահի դրությամբ Հանձնաժողով չի ներկայացրել:

Հանձնաժողովը 2022 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 367-Ա որոշմամբ հարուցել է թիվ ՀԳ-02532/22 վարույթը (այսուհետ նաև՝ **Վարույթ**)՝ Ընկերության կողմից առաքման ծառայությունների համար գործնականից տարբերվող ժամկետ հայտարարելու միջոցով հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշների առերևույթ առկայության հիմքով:

Վարույթի շրջանակներում Հանձնաժողովի նախագահի 2022 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 006654 գրությամբ (այսուհետ նաև՝ **Գրություն**) Ընկերությունից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել հետևյալ տեղեկատվությունը.

1. Ընկերության կողմից 2022 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2022 թվականի հոկտեմբերի 4-ն ընկած ժամանակահատվածում իրականացված առաքումների վերաբերյալ՝ համաձայն կից ներկայացվող Ձևանմուշի.

2. ո՞ր հանգամանքն (հանգամանքներ) է հիմք հանդիսացել 2022 թվականի հունիսի 1-ից մինչև 2022 թվականի հոկտեմբերի 4-ն ընկած ժամանակահատվածում առաքումների առնչությամբ Ընկերության կողմից 8-10 օր ժամկետի սահմանման համար՝ կցելով հիմնավորող բոլոր փաստաթղթերի պատճենները և այլ նյութերը:

Ընկերությունը 2022 թվականի հոկտեմբերի 26-ին ստացել է Գրությունը, որից հետո պարտավոր էր Գրությամբ պահանջված տեղեկատվությունը Հանձնաժողով ներկայացնել մինչև 2022 թվականի նոյեմբերի 2-ը ներառյալ: Մինչդեռ Ընկերությունը Գրությամբ պահանջված տեղեկատվությունը սույն որոշման ընդունման պահի դրությամբ Հանձնաժողով չի ներկայացրել:

Հանձնաժողովը 2022 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 447-Ա որոշմամբ հարուցել է վարույթ՝ Ընկերության կողմից Հանձնաժողովին տեղեկատվություն տրամադրելու հարցում տնտեսավարող սուբյեկտի պարտականության խախտումների հատկանիշների առերևույթ առկայության հիմքով:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) 65-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Հանձնաժողովի կողմից իրականացվող վարույթը կարող է կասեցվել, եթե չեն ներկայացվել պահանջված փաստաթղթերը, նյութերը կամ այլ տեղեկատվություն կամ ներկայացվել են ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկություններ:

Նման պայմաններում Հանձնաժողովը գտնում է, որ Վարույթը ենթակա է կասեցման, քանի որ Ընկերությունը 2022 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ ՄՊՀ-5416 և 2022 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 006654 գրություններով պահանջված տեղեկատվությունը չի ներկայացրել:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով, 65-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 5-րդ մասով, 42-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Կասեցնել «Վայլդբերրիզ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերաբերյալ թիվ ՀԳ-02532/22 վարույթը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՆԱԽԱԳԱՀ **Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2022 թ. դեկտեմբերի 6
Երևան